«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«19» 08 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

Ն ԳԲԽ 29/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանի կողմից 02.08.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կենտրոն) 02.08.2014թ. ներկայացված բողոքով «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) հայտնել է, որ 10.07.2014թ. «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» /ֆրանսիական/ ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգին, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերությունը և գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

«GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը հայտնել է, որ 18.07.2014թ. Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ից ստացվել է նիստի արձանագրություն, որի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, չնայած այն հանգամանքին, որ մրցույթի անցկացման օրը նույն հանձնաժողովի կողմից վերոնշյալ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը համարվել են մրցույթին համապատասխան:

«GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովի 17.07.2014թ. կայացրած որոշումը իրավաչափ չէ և խախտվել է Ընկերության՝ որպես մասնակցի իրավունքները: Վերոգրյալով պայմանավորված՝ բողոքաբերը խնդրել է դադարեցնել «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2014թ. արձանագրությամբ կայացված որոշումը, քանի որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ մասերը:

2. Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 07.08.2014թ. N 011/032-1353 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 02.08.2014թ. «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE»

ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն 11.08.2014թ. N 217-08 գրությամբ հայտնել է, որ «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի բացմանը հայտ է ստացվել միայն մեկ ընկերությունից՝ Լիոնում (Ֆրանսիա) հիմնադրված «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից (ընդգրկված կազմակերպությունները միավորվել են 2014թ. հունիսի 24-ին, գրանցվել՝ հուլիսի 1-ին):

Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն ներկայացրել է «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից ներկայացված հայտի վերաբերյալ հետևյալ դիտողությունները.

- Հայտի հայերեն տարբերակները ներկայացված չեն, ինչը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2-րդ մասի 5-րդ կետի՝ Հայտերը պատրաստելու կարգի 5.1 ենթակետի պահանջներին, համաձայն որի՝ «Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթային տարբերակով՝ 1 (մեկ) բնօրինակ և 3 (երեք) պատճեն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն և անգլերեն»:
- Հայտում ընդգրկված կարևոր մի շարք փաստաթղթեր (այդ թվում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագիրը) ներկայացված են միայն ֆրանսերենով, մրցույթի հրավերով պահանջված անգլերենի և հայերենի փոխարեն:
- Ներկայացված հայտի միայն մեկ բնօրինակում և պատճենում է նշված առաջարկվող գինը մրցույթի բոլոր տարբերակների համար, մնացած օրինակներում Հավելվածներ 4, 4.1 և 4.2 լրացված չեն:
- Համաձայն մրցույթի Հրավերի 3.1 Հավելվածի՝ հայտատուն պետք է ներկայացնի պահանջվող տեղեկություններ և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 7 տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում օրական 400,000մ3 միջին տարողությամբ քաղաքային 2 ԿՄԿ կառուցումը կամ վերականգնումը և օրական 300,000մ3 միջին տարողությամբ շերտավոր նստվածքային

տեխնոլոգիայի կիրառումը ներառող քաղաքային 2 ԿՄԿ կառուցում կամ վերականգնում աշխատանքների կատարումը:

Ընկերության կողմից ներկայացրած աշխատանքները հիմնավորող փաստաթղթերում ներկայացված ծավալները չեն համապատասխանում Հրավերով սահմանված պահանջներին կամ բացակայում են:

Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն նշել է նաև, որ ներկայացված նմանատիպ աշխատանքները իրականացված են անիրական ցածր գներով և բացառապես Իրանում և Ադրբեջանում, ինչի ստուգման հնարավորություն չկա:

Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն ընթացակարգի հրավերի պահանջների համաձայն կատարված նմանատիպ աշխատանքները և դրանց վերաբերյալ դիտողությունները ներկայացրել է հետևյալ աղյուսակի տեսքով՝

N	Ծրագրի անվանումը իրականացման ժամկետները	Նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների արժեք (Եվրո)	Մրցույթի հրավերի պահանջ	Համաձայն ներկայացված փաստաթղթերի	Ընկերության գործունեությունը տվյալ ծրագրում	Դիտողություններ
1	Խոյի կեղտաջրերի մաքրման կայան (2008-2010թթ.)	5.858.800	400,000 մ3 /օր	--------	նախագծում	Կից փաստաթղթերում նշված չէ ԿՄԿ-ի ծավալը:
2	Բուկանի կեղտաջրերի մաքրման կայան (2002-2005թթ.)	1.040.000	400,000 մ3 /օր	--------	ԿՄԿ կառուցում	Այս ծրագրի ժամկետները չեն համապատասխանում պահանջներին: ԿՄԿ-ն լավագույն է:
3	Մահաբադի ջրի մաքրման կայան (ընթացիկ)	10.244.160	400,000 մ3 /օր	64,800 մ3 /օր	կայանի կառուցում և խմելու ջրի վաճառք	Այս կայանը խմելու ջրի մաքրման կայան է, 64800 մ3 /օր ծավալով, չի համապատասխանում պահանջներին:
4	Սալմասի կեղտաջրերի մաքրման	1.682.400	300,000 մ3 /օր	-------	կառուցում	Կից փաստաթղթերում նշված չէ ԿՄԿ-

	կայան (2004-2006թթ.)					ի ծավալը:
5	Սալմասի ջրի մաքրման կայան (ընթացիկ)	10.338.800	300,000 մ3 /օր	49,680 մ3 /օր	կայանի կառուցում և խմելու ջրի վաճառք	Այս կայանը խմելու ջրի մաքրման կայան է, 49,680 մ3/օր ծավալով, չի համապատասխանում պահանջներին:

5. Առևտրային գրանցման վկայականի և տարբեր անդամների միջև կնքված համատեղ գործունեության ձեռնարկության կազմակերպման համաձայնագրի (որը ներկայացվել է ֆրանսերենով, հրավերի պահանջով անգլերեն և հայերեն թարգմանված տարբերակ չի ներկայացվել, ինչպես նաև ֆրանսերեն տարբերակի բնօրինակներում և կրկնօրինակներում բացակայում է 3-րդ էջը) վերլուծությունը ցույց է տալիս,որ ֆրանսիական Rouselle Philippe Conseil ընկերությունը մասնակցություն չի ունենա կոնսորցիումի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում: Ընկերության դերը հիմնականում կայանալու է ընդգրկված կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների վարչական կանոնակարգման, հաշիվների սպասարկման, բյուջեի և ծախսերի պլանավորման, տարբեր հաշվետվությունների կազման, այլ ոչ շինարարական կազմակերպչական աշխատանքների մեջ: Կոնսորցիումում ընդգրկված Իրանական Հանրապետության ռեզիդենտներ հանդիսացող SanatZaman և Fabesco ընկերությունները կիրականացնեն ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների ամբողջ ծավալը:

Այս հանգամանքից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ ֆրանսիական Rouselle Philippe Conseil ընկերությունը կապալառու չի հանդիսանում, միաժամանակ ներկայացված փաստաթղթերից պարզ է դառնում, որ գրանցված է Լիոնի առևտրի պալատում 2009թ-ին՝ որպես ինժեներական կազմակերպություն 1000 ԱՄՆ դոլար կանոնադրական կապիտալով:

Համացանցից ձեռք բերված տեղեկությունների համաձայն՝ ընկերության 2012թ. շրջանառությունը կազմել է 45300 եվրո և նմանատիպ հիդրո-շինարարական կառույցի վերակառուցման ու վերականգման փորձ չունի:

Կոնսորցիումի կողմից չի ներկայացվել ֆրանսիական Rouselle Philippe Conseil և իրանական կազմակերպությանը վերաբերվող որևէ ֆինանսական փաստաթուղթ,

ֆինանսական հաշվետվություններ, կանխիկի հոսքեր, բանկային շարժի վերաբերյալ քաղվածքներ, ինչպես նաև ֆինանսական աուդիտորական ընկերության ֆինանսական հաշվետվությունները պահանջվող տարիների համար:

Միաժամանակ ֆինանսական աուդիտորական ընկերությունների կողմից ֆրանսիական Rouselle Philippe Conseil և իրանական SANATZAMAN կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ դրական եզրակացությունները աուդիտորների կողմից տրվել են որոշակի վերապահումներով:

6. Գնային առաջարկ

Հավելված 4-ի համաձայն առաջարկված գինը կազմում է՝

Բազային առաջարկ՝ արտահայտված եվրոյով - 16,895,000:

Բազային առաջարկի տարբերակներ՝ արտահայտված եվրոյով - 1,158,710:

Առաջարկ թիվ 1՝ արտահայտված եվրոյով - 16, 688, 955 :

Թիվ 1 առաջարկի տարբերակներ՝ արտահայտված եվրոյով - 1,158,710:

Առաջարկ թիվ 2՝ արտահայտված եվրոյով- 17,024,739:

Առաջարկ թիվ 3՝ արտահայտված եվրոյով — 16,818,694:

Ներկայացված գները զգալիորեն գերազանցում են ֆրանսիական կառավարության կողմից սահմանված 10,270, 000 եվրո բյուջեն: Նշենք նաև, որ մրցույթի նախահաշիվը կազմում է 9,710,000 եվրո (ինչը կազմված է մանրամասն նախագծի հիման վրա՝ ըստ միջազգային գների) և ընկերության կողմից ներկայացված հայտային գինը համարում են ոչ իրատեսական և չհիմնավորված:

Հիմք ընդունելով «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից ներկայացրած հայտի վերաբերյալ վերոհիշյալ դիտողությունները՝ Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն մերժել է հայտը հետևյալ պատճառաբանությամբ.

- հայտի ոչ պատշաճ կազմում,

- ըստ ներկայացրածի՝ որպես կապալառու «մատակարար» հանդիսանում են իրանական SanatZaman և Fabesco ընկերությունները, իսկ ֆրանսիական կազմակերպությունը հանդիսանում է միայն վարչական գործողություններ իրականացնող, ինչի հետևանքով խախտվում է ՀՀ կառավարության և Ֆրանսիայի կառավարության միջև 2008թ. մայիսի 27-ին ստորագրված և 2008թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ ազգային ժողովի թիվ Ն-197-4 որոշմամբ վավերացված ֆինանսական

արձանագրության Հոդված 1-ի 2-րդ պարբերությամբ սահմանված պահանջը.

- ֆրանսիական սարքավորումների և ծառայությունների գնում Ֆրանսիայից,

- մրցույթին մասնակցության իրավունքի պահանջներին և որակավորման չափանիշներին անհամապատասխանություն:

Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն որոշում է կայացրել «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի հետ չսկսել ՀՀ գնումների մասին օրենքով թույլատրվող բանակցությունները:

3. ԳԲԽ-29/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-29/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանի 02.08.2014թ. ներկայացրած բողոքը, գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 17.07.2014թ. N 11 արձանագրությունը, Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 07.08.2014թ. N 213-08 և 11.08.2014թ. N 217-08 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից Աէրացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հայտ են ներկայացրել «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն):

Գնահատող հանձնաժողովի 17.07.2014թ. N 11 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ որոշում է կայացվել, հիմք ընդունելով «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE»-ի հայտի վերաբերյալ «Արտելիա Ville & Transport» ընկերության

ներկայացված գնահատման զեկույցը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված դիտողությունները, մերժել «GIE SANATZAMAN/ FABESTCRO/ROUSSELLE» հայտը և չսկսել թույլատրվող բանակցությունները:

«GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը ներկայացրած բողոքով հայտնել է, որ 10.07.2014թ. «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» /ֆրանսիական/ ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգին, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է:

Բողոքաբերը խնդրել է դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կողմից Աէրացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2014թ. կայացրած որոշումը, քանի որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ մասերը:

Պատվիրատուն 07.08.2014թ. N 213-08 և 11.08.2014թ. N 217-08 Կենտրոնին ներկայացրած գրություններով հայտնել է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը մերժվել է, քանի որ՝

1. Հայտը հայերեն չի ներկայացվել, ինչպես նաև մի շարք փաստաթղթեր ներկայցված են եղել միայն ֆրանսերենով, մինչդեռ Ընթացակարգի Հրավերի Մաս 2-ի 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթային տարբերակով՝ 1 (մեկ) բնօրինակ և 3 (երեք) պատճեն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն և անգլերեն լեզուներով: Բացի այդ, ֆրանսերեն ներկայացված փաստաթղթերի բնօրինակներում և կրկնօրինակներում բացակայում է 3-րդ էջը:

2. Ներկայացված հայտի միայն մեկ բնօրինակում և պատճենում է նշված առաջարկվող գինը, իսկ Ընթացակարգի մնացած օրինակներում Հավելվածներ 4, 4.1 և 4.2 լրացված չեն:

3. Ընկերության կողմից Ընթացակարգի Հայտով ներկայացրած աշխատանքները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին,

4. Առևտրային գրանցման վկայականի և տարբեր անդամների միջև կնքված համատեղ գործունեության ձեռնարկության կազմակերպման համաձայնագրի վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆրանսիական Rouselle Philippe Conseil ընկերությունը մասնակցություն չի ունենա կոնսորցիումի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում: Ընկերության դերը հիմնականում կայանալու է ընդգրկված կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների վարչական կանոնակարգման, հաշիվների սպասարկման, բյուջեի և ծախսերի պլանավորման, տարբեր հաշվետվությունների կազմման, այլ ոչ շինարարական-կազմակերպչական աշխատանքների մեջ: Կոնսորցիումում ընդգրկված Իրանական Հանրապետության ռեզիդենտներ հանդիսացող SanatZaman և Fabesco ընկերությունները կիրականացնեն ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների ամբողջ ծավալը:

5. Ներկայացված գները զգալիորեն գերազանցում են ֆրանսիական կառավարության կողմից սահմանված 10,270, 000 եվրո բյուջեն: Ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է 9,710,000 եվրո, իսկ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը զգալիորեն բարձր է և ոչ իրատեսական:

Կենտրոնը, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով գնման ընթացակարգին «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը, հանգում է հետևյալ եզրակացության.

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 27-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 2-րդ մասի՝ «Բաց ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի 5.1 ենթակետի համաձայն՝ բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել փաստաթղթային տարբերակով՝ 1 (մեկ) բնօրինակ և 3 (երեք) պատճեն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն և անգլերեն:

«GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից հայտը հայերեն տարբերակով չի ներկայացվել: Բացի այդ, մի շարք փաստաթղթեր ներկայացված են եղել միայն ֆրանսերեն, ինչը չի համապատասխանել Ընթացակարգի Հրավերի 2-րդ մասի՝ «Բաց ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի 5.1 ենթակետով սահմանված պահանջներին: Ավելին տարբեր անդամների միջև կնքված համատեղ գործունեության ձեռնարկության կազմակերպման համաձայնագրի ֆրանսերեն տարբերակի բնօրինակներում և կրկնօրինակներում բացակայել է 3-րդ էջը:

Կենտրոնում՝ 15.08.2014թ. ժամը 15:00-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում, «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը հայտնեց, որ ընթացակարգի հրավերով սահմանված «փաստաթղթերը հայերեն և անգլերեն կազմված լինելու» պահանջը Ընկերությունը դիտարկել է որպես այլընտրանքային, որի հետևանքով փաստաթղթերի մի մասը ներկայացվել է հայերեն, իսկ մյուս մասը՝ անգլերեն: Հ. Մկրտչյանը տեղեկացրեց նաև, որ, ըստ Ընկերության, կարևորություն չներկայացնող փաստաղթերը չեն թարգմանվել և ներկայացվել են ֆրանսերեն:

- Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հրավերի 1-ին մասի 4.3 ենթակետի համաձայն՝ մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված գնային առաջարկը:

Կենտրոնում՝ 15.08.2014թ. ժամը 15:00-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում, «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը ընդունեց, որ «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկի միայն մեկ բնօրինակում և պատճենում է նշվել առաջարկվող գինը

(Հավելվածներ 4, 4.1 և 4.2) և մնացած օրինակներում Հավելվածներ 4, 4.1 և 4.2 լրացված չեն եղել:

- «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումը «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտով Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» մասին տեղեկանք (այսուհետ՝ Տեղեկանք):

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանգրով նախաեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 80-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկան, ծավալը՝ գնային արտահայտությամբ (եվրո), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալների մասին տեղեկատվությունները:

2. մասնակիցը համարվում է օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանգրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

Հրավերի 1-ին մասի 2.3 ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. մանակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի առարկան, ծավալը՝ գնային արտահայտությամբ (եվրո), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները:

2. մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկատվությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող յոթ տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման (նմանատիպ) աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանգրեր: Նմանատիպ են համարվում օրական 400,000մ3 միջին տարողությամբ քաղաքային 2 ԿՄԿ կառուցումը կամ վերականգնումը և օրական 300,000մ3 միջին տարողությամբ շերտավոր նստվածքային տեխնոլոգիայի կիրառումը ներառող քաղաքային 2 ԿՄԿ կառուցում կամ վերականգնում աշխատանքների կատարումը:

«GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» մասին տեղեկանքով՝

- որպես նախկինում կատարված աշխատանք նշվել է 2008-2010թթ. Խոյի կեղտաջրերի մաքրման կայանի նախագծումը, սակայն տեղեկանքում չի նշվել ԿՄԿ ծավալը, մինչդեռ Հրավերով պահանջվել է 400.000 մ3/օր ծավալ:

- որպես նախկինում կատարված աշխատանք նշվել է 2002-2005թթ. Բուկանի կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը, սակայն վերոհիշյալ ժամկետում կատարված աշխատանքները չեն կարող դիտվել հրավերով պահանջվող հայտը ներկայացնելու տարվա և դրան ***նախորդող յոթ տարիների ընթացքում*** կատարված աշխատանք:

- որպես նախկինում կատարված աշխատանք նշվել է Մահաբադի ջրի մաքրման կայանի կառուցումը և խմելու ջրի վաճառքը: Սակայն այն խմելու ջրի մաքրման կայան է, այլ ոչ թե պահանջվող կեղտաջրերի մաքրման կայան: Միաժամանակ Ընթացակարգի հրավերով պահանջվել է 400,000 մ3/օր ծավալ, իսկ կոնսորցիումի կողմից ներկայացվել է

64.800 մ3/օր ծավալ: Բացի այդ, Մահաբադի ջրի մաքրման կայանի աշխատանքները ավարտված չեն, հետևաբար չեն կարող համարվել նախկինում կատարված:

- որպես նախկինում կատարված աշխատանք նշվել է Սալմասի կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը /2004-2006թթ/, սակայն չի նշվել ԿՄԿ ծավալը, մինչդեռ Հրավերով պահանջվել է 300.000 մ3/օր ծավալ:

- որպես նախկինում կատարված աշխատանք նշվել է Սալմասի ջրի մաքրման կայանի կառուցումը, որը խմելու ջրի մաքրման կայան է, այլ ոչ թե պահանջվող կեղտաջրերի մաքրման կայան: Միաժամանակ Ընթացակարգի հրավերով պահանջվել է 300,000 մ3/օր ծավալ, իսկ կոնսորցիումի կողմից ներկայացվել է 49.680 մ3/օր ծավալ: Բացի այդ, Սալմասի ջրի մաքրման կայանի կառուցման աշխատանքները ավարտված չեն, հետևաբար չեն կարող համարվել նախկինում կատարված:

Կենտրոնում՝ 15.08.2014թ. ժամը 15:00-ին կայացած բողոքը քննող հանձնաժողովի նիստի ընթացքում, «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանը հայտնեց, որ ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշով պահանջվող 400,000մ3 միջին տարողությամբ քաղաքային 2 ԿՄԿ կառուցումը կամ վերականգնումը և օրական 300,000մ3 միջին տարողությամբ շերտավոր նստվածքային տեխնոլոգիայի կիրառումը ներառող քաղաքային 2 ԿՄԿ կառուցում կամ վերականգնում աշխատանքների ծավալները մեծ են եղել և հենց այդ պատճառով «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության կողմից Տեղեկանքով ներկայացվել են նաև ընթացքի մեջ գտնվող աշխատանքներ /Մահաբադի և Սալմաստի ջրի մաքրման կայանների կառուցումը/, ինչպես նաև ներկայացվել են ոչ միայն կեղտաջրերի, այլ նաև ջրի մաքրման կայանների կառուցման աշխատանքեր:

Այսպիսով, «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված Հրավերի N 3.1 հավելվածը հանդիսացող «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշի մասին տեղեկանքը չի համապատասխանում Կարգի 80-րդ կետով և Հրավերի 2.3 ենթակետով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

• ՀՀ կառավարության և Ֆրանսիայի կառավարության միջև 2008թ. մայիսի 27-ին ստորագրված ֆինանսական արձանագրության (2008թ. հոկտեմբերի 1-ին թիվ Ն-197-4 որոշմամբ վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից) 1-ին հոդված 2-րդ պարբերությամբ սահմանված է հետևյալ պահանջը. «Ֆրանսիական սարքավորումների և ծառայությունների գնում Ֆրանսիայից», մինչդեռ «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» կոնսորցիումի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված Հայտով որպես կապալառու «մատակարար» հանդիսանում են իրանական SanatZaman և Fabesco ընկերությունները, իսկ ֆրանսիական կազմակերպությունը հանդիսանում է միայն վարչական գործառույթներ իրականացնող Ընկերություն, ինչը հակասում է ՀՀ կառավարության և Ֆրանսիայի կառավարության միջև 2008թ. մայիսի 27-ին ստորագրված ֆինանսական արձանագրության Հոդված 1-ի 2-րդ պարբերությամբ սահմանված պահանջին:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Երևանի քաղաքապետարանի «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից Աէրացիա ԿՄԿ վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԶԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-14/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2014թ. կայացրած որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ «GIE SANATZAMAN/FABESTCRO/ROUSSELLE» ընկերության հայաստանյան ներկայացուցիչ Հ. Մկրտչյանի կողմից Կենտրոնին 02.08.2014թ. ներկայացված բողոքը բավարարելու հիմքեր առկա չեն և առաջարկում ենք մերժել այն:

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-29/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Հովակիմյան